ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2012 թ. N 9-Ն

ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով.

ավագանին ՈՐՈՇՈՒՄ է՝

Համայնքում 2013 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ միասնական դրույքաչափեր ՝

1. Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի , շինությունների / ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության / տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանել ՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար -15000 դրամ:

բ) սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝

բա) 201-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ:

բբ) 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբետների համար՝50000դրամ:

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ:

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:

դ) 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , արդիականացման աշխատանքների/ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտաչափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի

գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ա) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի «1»-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ 2000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանում է՝

ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար -2000 դրամ,

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում բացօդյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

ա) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350դրամ ;

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ

գ) խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ.

6.Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի ,զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքներ/ սաունաներ/, խաղատները ժամը 24-00-ից հետո աշխատացնելու թույլտվության համար տեղական տորքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար 25000դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000դրամ.

գ) բաղնիքների /սաունաների/ համար 200000դրամ

դ) Խաղատների կազմակերպման համար 500000դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար 250000դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար 100000 դրամ

7. Համայնքի տարածքում,յուրաքանչյուր ամսվա համար, արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ ք/մ տեղական տուրքը սահմանել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազի համար 2500 դրամ

գ) այլ արտաքին գովազդի համար -1500դրամ

դ) ծխախոտի արտադրանքի գովազդի համար-5000դրամ

ե) դատարկ գովազդային վահանակների համար-700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 2000դրամ

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու/ բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել -5000 դրամ:

10. Սույն հոդվածի «1»-ին, «2»-րդ , «3»-րդ կետերով սահմանված դրույքաչափերը գյուղական համայնքում հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ:

Համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար տեղական վճար սահմանել՝

1. համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 2000 դրամ

2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝4000 դրամ:

կողմ 5 , դեմ 0

Ավագանի՝ Հ. Մնացականյան

Է. Սիմյոնովա

Ս. Ղազարյան

Գ. Միրզոյան

Ե. Մխիթարյան

Համայնքի ղեկավար՝ Ա. Իոնանով